

ՀՀ Կոտայքի մարզից ստացվել է 11 ներդրումային ծրագրի առաջարկ

ՀՀ վարչապետի գլխավորությամբ ՀՀ մարզեր աշխատանքային այցերի արդյունքում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունում մարզերից շարունակում են ստացվել մի շարք ներդրումային ծրագրերի առաջարկություններ: Փետրվարի 17-ի դրությամբ ՀՀ Կոտայքի մարզից ստացվել է 11 ներդրումային ծրագրի առաջարկ, որոնք առաջիկայում կքննարկվեն ՀՀ կառավարության հարթակում:

ՀՀ Կոտայքի մարզի ներդրումային ծրագրերի ցանկ

N	Համայնք	Ծրագիրը	Աշխատատեղ
1	Հրազդան	<p style="text-align: center;"><u>Զերմոցային տնտեսություն</u> <u>«Գրին Ֆարմեր»</u></p> <p>Նախատեսվում է ջերմոցային տնտեսությունում աճեցնել լոլիկ, տարեկան 1 քառակուսի մետրից ստանալով 50կգ բերք:</p>	100-120
2	Բջնի	<p style="text-align: center;"><u>Բիոմասսայից վառելանյութի (պելետի) և համապատասխան վառարանների արտադրություն</u></p> <p>Բնակելի տների, արտադրական և հանրային վայրերի տաքացման նպատակով նախատեսվում է արտադրել պելետ՝ խոտից, ծղոտից և խոտայլուրից:</p> <p>Որպես գազի և վառելափայտի այլընտրանքային՝ ավելի էժան և տեղական հումքով ստացվող վառելանյութ՝ նախատեսվում է արտադրել պելետ, որի ստացման պրոցեսը կայանում է հետևյալում. հումքը՝ խոտն աղացվում է մուրճավոր խոտաղացով և ստացված խոտայլուրը ենթարկվում է</p>	Ծրագրի իրականացման առաջին տարում՝ 7, 2-րդ տարում՝ 12

		<p>ջերմամշակման չոր գոլորշիով: Այնուհետև՝ 300 աթմ. ճնշման պայմաններում գրանյուլատորի միջոցով արտադրվում է պելետը: Զերմատվության բարձրացման նպատակով խոտալյուրի հետ կխառնվեն նաև գոմաղբ, տորֆ և այլն: Ստացված պելետներն անցնում են սառեցման պրոցես և փաթեթավորվելով պոլիէթիլենե պարկերում և պահեստավորվում են:</p> <p>Արտադրության կազմակերպման համար ծրագրով նախատեսվում է Բջնիի և հարևան համայնքների բնակիչներից գնել և պահեստավորել ծղոտ, դաշտի և արոտավայրի խոտ:</p> <p>Պլանավորվում է նաև մեխանիկական արտադրամասում արտադրել պելետի համար նախատեսված վառարաններ և վաճառել կամ ապառիկ տրամադրել օգտագործողին պայմանով, որ պետք է պելետ գնի կազմակերպությունից 1 տարվա ընթացքում ետ վճարելով վառարանի արժեքը:</p> <p>Ծրագրով նախատեսվում է վերանորոգել մեխանիկական արտադրամասն ու պահեստի տարածքը, արտադրել պելետով աշխատող վառարաններ, ձեռք բերել խոտաղաց, խոտալյուրի խոնավության կարգավորիչ սարքավորում, գրանուլատոր և պելետի սառեցման սարքավորում:</p>	
3	Զովունի	<p><u>Երկաթբետոնե կոնստրուկցիաներ</u></p> <p>Նախատեսվում է արտադրել գյուղատնտեսական նշանակության ե/բետոնե</p>	<p>18-20 աշխատատեղ՝ արտադրությունում, 18-20 աշխատատեղ՝ մոնտաժային աշխատանքների իրականացման համար</p>

		<p>Նախալարված հենասյուներ՝ 2 տեսակի (միջանկյալ հենասյուներ 7x7.5 սմ Լ-4.8 մ և եզրային հենասյուներ 9x9.5 սմ Լ-4.8 մ) և այլ մետաղական կցամասեր, որոնք նախատեսվում են պողատու այգիների կարկտապաշտպան համակարգերի կառուցման համար՝ ե/բետոնե սյուների վրա ցանցի ամրացման միջոցով: Նախատեսվում է ստեղծել այգիներում մոնտաժային աշխատանքները իրականացնող բրիգադա և համապատասխան մեքենամեխանիզմների ամբողջական կոմպլեկտ տեղերում աշխատանքների իրականացման համար:</p>	
4	Քանաքեռավան	<p><u>Հագուստի արտադրություն/</u> <u>MACSON ընկերություն</u></p> <p>Նախատեսվում է հիմնել մանուֆակտուրայի արտադրություն: Իսպանական MACSON ընկերության ներկայացուցչի հետ ձեռք է բերվել նախնական համաձայնություն, Քանաքեռավան համայնքի տարածքում կազմակերպել նոր մանուֆակտուրայի արտադրություն, առկա արտադրական շենքում, որը ունի վերանորոգման կարիք: Բանակցությունների դրական ելքի դեպքում հիմնական ներդրումը ընկերությունը կվերցնի իր վրա: MACSON ընկերությունը նախատեսում է իր</p>	60-100

		<p>ապրանքի սպառումը ՌԴ-ում:</p> <p>Ընկերությունը ՀՀ-ում կազմակերպելու է ծառայություն, հումքի ներկրում-ապրանքի արտահանում:</p> <p>Ակնկալվում է ենթակառուցվածքի բարեկարգում՝ էլ. ենթակայանի բարեկարգում՝ համապատասխան հզորությամբ</p> <p>Արտադրությունը նախատեսվում է իրականացնել արտադրական տարածքում վարձակալության միջոցով (1200 մ/ք), որը կարիք ունի վերանորոգման, եթե ներդնող ընկերությունը հանձն չառնի այս աշխատանքները, ապա կարիք կլինի վերանորոգման համար մատչելի վարկավորում:</p>	
5	Սոլակ	<p><u>Կարի արտադրամասի հիմնում</u></p> <p>Նախատեսվում է ստեղծել կարի արտադրամաս՝ տարբեր տեսակի հագուստի արտադրության նպատակով:</p> <p>«ՆՈՐԱԶԵՎՈՒԹՅՈՒՆ» կարի արտադրամաս սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հիմնադրվելու է 2017-2018 թվականներին՝ նպատակ ունենալով օգտագործել համայնքի աշխատուժը և ստեղծել նոր տեսակի արտադրանք:</p> <p>Ստացված արտադրանքի մեծ մասը ընկերությունը նախատեսում է իրացնել ներքին շուկայում:</p>	25

		Արտադրանքը ներքին շուկայում կիրացվի հնարավորինս ցածր գնով:	
6	Սոլակ	<p><u>Կաթի մթերում և վերամշակում</u></p> <p>Նախատեսվում է հիմնել կաթի մթերման և վերամշակման արտադրամաս:</p> <p>Համայնքում ներկա պահին առկա են 450 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ և 250 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ: Արտավայրերը գտնվում են բավականին բարենպաստ բնակլիմայական գոտում, դաշտամիջյան ճանապարհները բարեկարգ են: Որակյալ աշխատուժի և անհրաժեշտ մասնագետների խնդիր ընկերությունը չունի՝ Սոլակ համայնքում և հարակից համայնքներում առկա են: Անհրաժեշտ ներդրումների դեպքում ընկերությունը հնարավորություն ունի առաջին իսկ տարում ծավալել արտադրություն: Հրազդանի տարածաշրջանում կաթը շատ որակյալ է, այդ պատճառով մեծ պահանջարկ ունի տեղական շուկայում: «ԱՆԻ-ԿԱԹ» ընկերությունն իր այս ձեռնարկումների համար անհաղթահարելի սպառնալիքներ չի տեսնում:</p> <p>Ներգրված միջոցները նախատեսվում են կաթի մթերման և վերամշակման արտադրամասի հիմնման առաջին տարվա ընթացիկ ծախսերի կատարման համար:</p>	10
7	ՔԱՍԱԽ	<p><u>Էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիայով կանկարից ինուլինի և պեկտինի ստացման</u></p>	200

		<p><u>համար գյուղատնտեսական ուսումնասիրտադրական կենտրոնի ստեղծում</u></p> <p>Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ստեղծել տոպինամբուրային ինուլինի մասսայական արտադրություն, ինչպես նաև համալիր ուսումնասիրտադրական կենտրոն Քասախ համայնքում:</p> <p>Ծրագրի խոշոր և կարևորագույն կոմպոնենտն է Տոպինամբուրային (լատ.՝ <i>Heliánthus tuberósus</i>) Ինուլինի արտադրության հիմնումը՝ օգտագործելով զարգացած տեխնոլոգիաներ առանց քիմիկատների կիրառման՝ միաժամանակ պահպանելով հումքատեսակի կենսաբանական ակտիվություն:</p>	
8	Բյուրեղավան	<p><u>Կաշվի և կաշվե իրերի արտադրություն</u></p> <p>Նախատեսվում է գործարանում կազմակերպել բնական կաշվի և կաշվե իրերի արտադրություններ:</p> <p>Ներդրումներն ուղղվելու են տեղական գյուղատնտեսական հումքը՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների մորթիներ, վերամշակելուն:</p> <p>Լեդերս» ՓԲԸ -ի կողմից կաշվի և կաշվե իրերի արտադրությունը իրականացվելու է իտալական «Լեկսուս Լեզերս Բյանկետի Քրիստիանո» ընկերությունը հետ կնքված ներդրումների պայմանագրի հիման վրա: Ընկերությունը կազմակերպելու է</p>	150

		<p>նաև օժանդակ արտադրություն (կաշվի արտադրությանը մեջ օգտագործվող փայտե սարքավորումների արտադրություն), ինչի արդյունքում ևս կնվազի պատրաստի արտադրանքի գինը:</p>	
<p>9</p>	<p>Հրազդան</p>	<p><u>1ՄՎտ հզորությամբ արևային կայանի կառուցում</u></p> <p>«Արման Մելիքսեթյան» ՍՊԸ-ն նախատեսում է արևային կայանի կառուցման և հետագա շահագործման արդյունքում արտադրել էլեկտրաէներգիա:</p> <p>Ընկերությունը կառուցված արևային կայանի արտադրած էլեկտրաէներգիան, համաձայն Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի N 374-Ն որոշման՝ կվաճառի Հայաստանի էլեկտրական ցանցերին համապատասխան սակագնով 20 տարի շարունակ՝ համաձայն ՀԷՑ-ի և տվյալ ընկերության միջև գոյություն ունեցող էլեկտրաէներգիայի գնման պայմանագրի:</p> <p>Ֆոտովոլտային տեխնոլոգիաների տեղադրումն էլ ավելի գրավիչ է Կոտայքի մարզում առկա բարձր արևային ներուժի (միջինը 1800կՎտժ/մ²) և համապատասխան հողատարածությունների շնորհիվ:</p> <p>Ծրագրի իրականացման</p>	<p>20</p>

		<p>արդյունքում նաև մարզում վտանգավոր մթնոլորտային արտանետումները տարեկան կտրվածքով կնվազեն:</p>	
<p>10</p>	<p>Քասախ</p>	<p>Արևային տեխնոլոգիաների տեղադրման միջոցով Քասախ համայնքի տնտեսություններում տաք ջրամատակարարման ապահովում և փողոցային լուսավորության կազմակերպում ծրագրով առաջարկվում է Քասախ համայնքի բոլոր տնտեսությունների տաք ջրամատակարարման ապահովում արևային ջրատաքացման համակարգերի միջոցով և համայնքի Մուշ թաղամասի փողոցային լուսավորության կազմակերպումը արևային լուսավորության միջոցով:</p> <p>Նախատեսվում է Քասախ համայնքի բոլոր սեփական տների և բազմաբնակարան շենքերի բնակարանների գոյություն ունեցող տաք ջրամատակարարման համակարգերը փոխարինվեն ամբողջությամբ չժանգոտվող մետաղից պատրաստված բարձրորակ և երկարակյաց արևային ջրատաքացման համակարգերով: Առաջին փուլով նախատեսվում է 1000 տնտեսությունների համար տեղադրել 1000 հատ 30 խողովակներով բարձրորակ արևային վակուումային ջրատաքացուցիչներ:</p> <p>Յուրաքանչյուր տեղադրված ջրատաքացուցիչ օրական միջինը</p>	<p>Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է 50-100 կարճաժամկետ և 10 երկարաժամկետ աշխատատեղերի ստեղծում:</p>

		<p>կարտադրի 300 լիտր տաք ջուր, որը կբերի տաք ջրամատակարարման ծախսերի մինչև 95% խնայողության: Յուրաքանչյուր ձեռք բերման միջին արժեքը 1000 միավոր տեղադրման դեպքում կկազմի մոտ 415 000 ՀՀ դրամ:</p>	
11	Արզական	<p>Հանգստի գոտու ընդլայնում ՀՀ Կոտայքի մարզի գ.Արզական, Անատառային 11 հասցեում գտնվող հյուրանոցային համալիրի ընդլայնման և ծառայությունների քանակի ավելացման և որակի բարձրացման նպատակով անհրաժեշտ է 1.4 հա պետական սեփականության անտառային հողի նպատակային նշանակությունը փոխել, սահմանված կարգով հանձնել Ձուլակենտրոն ԲԲԸ-ին պատկանող հանգստյան տանը, որը վերջինիս կողմից համապատասխան ներդրումների իրականացման դեպքում կծառայի հանգստի կազմակերպման համար:</p>	<p>Աշխատատեղերի քանակը 30-ից կհասնի 45-ի</p>